



Ուղեցույց վտարման ռիսկի վերաբերյալ

Սույն ուղեցույցը նախատեսված է ապահովելու միջոլորտային կանխարգելման և արձագանքման նվազագույն չափանիշները՝ ինչպես վտարման վտանգի տակ գտնվող առանձին տնային տնտեսությունների, այնպես էլ տնային տնտեսությունների խմբերի համար: Այն ճանաչում է անհատական և կոլեկտիվ վտարման բազմակողմանի և հեռահար ազդեցությունը անձի կյանքի վրա և նպատակ ունի տրամադրելու տարբեր ոլորտներում դերերի ու պարտականությունների ամփոփ նկարագրություն՝ այդ ազդեցությունը մեղմելու, ինչպես նաև պատրաստվածության և արձագանքման համար: Այն մշակվել է ճանաչված լավագույն փորձի և քաղված դասերի հիման վրա, այդ թվում՝ Լիբանանում և Ուկրաինայում:

Ուղեցույցը կազմված է հետևյալ բաժիններից.

- Վտարման սցենարներ և բարձր ռիսկի տակ գտնվող անձանց բնութագրեր
- Ռիսկի նվազեցման միջոցառումներ
- Միջոլորտային պատրաստվածության գործողություններ
- Միջոլորտային արձագանքման գործողություններ:

1. Վտարման սցենարներ և բարձր ռիսկի տակ գտնվող անձանց բնութագրեր

Անհատական կամ կոլեկտիվ վտարման սպառնալիքները սովորաբար առաջ են գալիս մասնավոր կարգով վարձակալած կացարաններում՝ սեփականատիրոջ կողմից (սովորաբար բնակելի և ոչ բնակելի շենքերում), բայց կարող են նաև առաջանալ տարբեր մարմինների կողմից՝ կոլեկտիվ կացարաններում: Պաշտպանության մշտադիտարկյան արդյունքների համաձայն՝ վտարման չորս ամենատարածված պատճառներն են.

Վտարման պատճառները

- Վարձը վճարելու անկարողություն կամ ժամկետանց վարձավճարներ
- Վարձավճարների անսպասելի/անկայուն բարձրացում
- Գույքի սեփականատերը/տնօրինողը/համապատասխան մարմինը ցանկանում է կրկին տիրապետել շենքը՝ այլ օգտագործման համար:

Սույն ուղեցույցը կենտրոնանում է այս չորս սցենարների վրա, որոնք ամենից շատ կարող են ազդել փախստական բնակչության վրա:

Սովորաբար Հայաստանում փախստականները վարձակալության միայն բանավոր պայմանագիր են կնքում: Վտարման մասին հաճախ հայտարարվում է գույքի սեփականատիրոջ կամ տնօրինողի (կոլեկտիվ բնակեցման դեպքում) կողմից կամ նրանց անունից: Ծանուցման ժամկետը կարող է տատանվել անմիջապեսից մինչև մի քանի օր կամ մինչև մի քանի ամիս: Սովորաբար սեփականատիրոջ կողմից մասնավոր բնակարաններից/տներից վտարումները ավելի փոքր մասշտաբ (ազդեցություն անհատի կամ տնային տնտեսության վրա) ունեն, քան գույքը տնօրինող սուբյեկտների կողմից իրականացվող վտարումները:

Վտարման սպառնալիքը կարող է փախստականներին դնել պաշտպանության ռիսկերի տակ. առանց կացարանի մնալը լրացուցիչ և նույնիսկ ավելի լուրջ ռիսկեր է ստեղծում պաշտպանության համար: Կան անձինք, ովքեր իրենց հատուկ հանգամանքների կամ բնութագրիչների պատճառով վտարման բարձր ռիսկի տակ են գտնվում և, ամենայն հավանականությամբ, արդյունքում ավելի լուրջ են տուժում: Վտարմանը արձագանքելիս գործընկերները պետք է առաջնահերթություն տան այդ անձանց: Ստորև



ներկայացված են վտարման հետ կապված պաշտպանության ռիսկերը և բարձր ռիսկի տակ գտնվող անձանց բնութագրերը:

Պաշտպանության ռիսկերը

- Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը
- Ռեսուրսների կամ ծառայությունների տրամադրման մերժումը, ինչպես, օրինակ, գույքի սեփականատիրոջ կողմից ջեռուցումն անջատելը
- Շահագործումը, հարկադրանքը կամ մանիպուլյացիայի այլ վնասակար ձևերը
- Գենդերով պայմանավորված բռնությունը (իր բոլոր ձևերով)
- Երեխաների աշխատանքը, դպրոցից դուրս մնալը կամ երեխաների պաշտպանության հետ կապված այլ ռիսկեր
- Անօթևան դառնալը, որն ավելի է մեծացնում անհատների խոցելիությունը շահագործման, հարկադրանքի, գրկանքների և դրանց հաղթահարման վնասակար մեխանիզմների նկատմամբ:
- Մանկավարժությունը
- Ընտանիքի տարեց կամ խնամքի կարիք ունեցող անդամին խնամքի շուրջօրյա հաստատություն տանելը

Բարձր ռիսկի տակ գտնվող անձանց բնութագրերը

Եկամուտ ստեղծելու ներուժը (անհատ կամ տնային տնտեսություն) և տնային տնտեսությունից կախվածության հարաբերակցությունը առաջնային գործոններն են, որոնք ազդում են վտարման սպառնալիքների նկատմամբ խոցելիության վրա: Ստորև ներկայացված բնութագրերը առավել հավանական է, որ կունենան եկամտի ավելի ցածր ներուժ և տնային տնտեսությունից կախվածության ավելի բարձր հարաբերակցություն.

- Միայնակ ծնող կամ խնամք իրականացնող անձ (հատկապես եթե կին գլխավորով ընտանիք է)
- Բազմազավակ տնային տնտեսության չաշխատող գլխավոր
- Հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության որևէ աստիճանի սահմանափակում ունեցող ունեցող անդամ/ներ ունեցող տնային տնտեսություններ
- Տնային տնտեսություններ, որոնք ունեն քրոնիկ հիվանդություն կամ մշտական խնամքի կարիք ունեցող անդամ/ներ (լրացուցիչ ծախսեր/խնամքի բեռ)
- Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձ, որը չունի ինքնասպասարկման կարողություն
- Տարեց կամ ծանր հաշմանդամություն ունեցող անձ երեխաների հետ
- Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ
- Այլ խոցելիություն, որն ազդում է աշխատանքի վրա կամ խոչընդոտում ինքնախնամքին:

2. Ռիսկի նվազեցման միջոցառումներ

I. Իրազեկում և կրթություն

Տեղեկություններ տրամադրել ինչպես փախստականներին, այնպես էլ հյուրընկալող համայնքում հավանական սեփականատերերին՝ հստակեցնելով իրավունքները, պարտականությունները և արտոնությունները՝ համաձայն ազգային օրենսդրության, ինչպես նաև հակազդելով երկու կողմերի ապատեղեկացվածությանը կամ թյուրըմբռնմանը: Գործողությունները կարող են ներառել ընդհանուր իրազեկման արշավներ և թիրախային իրավաբանական խորհրդատվություն, միջնորդական ծառայություններ, տեղեկատվական խորհրդատվություն և սեփականության իրավունքների հետ կապված իրավաբանական ներկայացուցչություն (ներառյալ սեփականության երաշխիքները և իրավաբանական ձևակերպումները): Ընդհանուր տեղեկատվական արշավները պետք է նպատակ ունենան ներդաշնակեցնելու վարձակալների և սեփականատերերի ակնկալիքները՝ միաժամանակ վերացնելով միմյանց մասին սխալ պատկերացումները: Նման արշավները պետք է նաև խրախուսեն



վարձակալության պայմանագրերի ձևակերպումը գործող օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև ծանուցման համար ողջամիտ ժամկետներ նախատեսելը, վարձավճարների վճարման ճկուն համակարգ (օրինակ՝ տարժամկետ վճարում) ներդնելը, ինչպես նաև սեփականատիրոջ և վարձակալի միջև հանձնման-ընդունման ակտ կնքելը:

II. Մատչելի վարձակալության խթաններ

Կառավարության հետ քննարկել Կառավարության կողմից ղեկավարվող այնպիսի ֆինանսական խթանների իրագործելիությունը, որոնք խրախուսում են և՛ փախստականներին, և՛ ընդունող համայնքում սեփականատերերին գտնել շուկայական բնակարանային լուծումներ: Օրինակ՝ փախստական վարձակալներին եկամտահարկը վերադարձնելը՝ վարձակալության ծախսերը փոխհատուցելու համար, կամ փախստականներին բնակարան վարձակալության հանձնելու դեպքում սեփականատերերի համար վարձակալության պարզեցված վարչական ընթացակարգեր և հարկային արտոնություն սահմանելը: Նման գործողությունները կարող են մեծացնել վարձակալության շուկայի միավորների ֆոնդը և իրենց վարձը վճարելու ունակ փախստականների թիվը՝ այդպիսով նվազեցնելով ճնշումը Կառավարության կողմից աջակցվող կացարանների վրա, որոնք կարող են վերապահվել առավել խոցելի փախստականներին:

III. Սոցիալական բնակարանների և կոլեկտիվ կացարանների տրամադրում

Շարունակել իրականացնել սոցիալական բնակարանների և կոլեկտիվ կացարանների ֆոնդի բարելավման և մեծացման ընթացիկ ծրագրերը՝ հասանելի դարձնելով այս տարբերակը փախստականների շրջանում առավել խոցելի խմբերի համար (օրինակ՝ բարձր ռիսկային պրոֆիլներ)՝ համաձայն բնակարանաշինության ազգային ծրագրերի: Սոցիալական բնակարանները կարող են օգնել լուծել բնակարանային անհապաղ կարիքները՝ հրատապ իրավիճակներում և ապահովել կայուն բնակարանային լուծում առավել խոցելի փախստականների համար (օրինակ՝ եկամուտ ստեղծելու սահմանափակ ներուժի կամ դրա բացակայության դեպքում): Սոցիալական բնակարանները կարող են նաև կայունության զգացողություն առաջացնել փախստականների մոտ, քանի որ դրանք վերացնում են վտարման վտանգը: Այն դեպքերում, երբ սոցիալական բնակարանները ժամանակավոր լուծում են, բնակեցմանը զուգահեռ պետք է նշանակվի սոցիալական աշխատող և կազմվի գործի պլան՝ ուղղված ապրուստի միջոցների զարգացմանը և աստիճանական անցմանը շուկայական վարձակալության:

Հիմնավորում.

- Ապահով և անվտանգ բնակարանների հասանելիություն. սոցիալական բնակարանների և կոլեկտիվ կացարանների տրամադրումը կապահովի տեղահանված ընտանիքների համար ապահով և անվտանգ բնակարանների հասանելիությունը՝ նվազեցնելով անօթևանության վտանգը: Դա շատ կարևոր է նրանց բարեկեցությունը պահպանելու և իրենց կյանքը վերակառուցելու հնարավորություն ստալու համար:
- Սոցիալական ինտեգրում և համայնքի աջակցություն. սոցիալական բնակարանները և կոլեկտիվ կացարանները կարող են ծառայել որպես սոցիալական ինտեգրման հարթակ՝ նպաստելով տեղահանված փախստականների շրջանում համայնքի զգացողության ձևավորմանը: Դա հնարավորություններ կստեղծի փորձի փոխանակման, աջակցության ցանցերի հաստատման և հիմնական ծառայությունների հասանելիության համար:
- Կայուն երկարաժամկետ լուծումներ. ներդրումներ կատարելով սոցիալական բնակարաններում՝ կառավարությունը կարող է հիմք դնել բնակարանային կայուն երկարաժամկետ լուծումների համար: Մա կօգնի լուծել խոցելի բնակչության բնակարանային կարիքները ոչ միայն ճգնաժամից անմիջապես հետո, այլ նաև ապագայում:



IV. Համագործակցային աշխատանք

Սույն ուղեցույցում նկարագրված գործողությունները պահանջում են ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարության մշտական առաջնորդություն, այնպես էլ Կառավարության, ՄԱԿ-ի գործակալությունների, ազգային և միջազգային ՀԿ-ների, դոնորների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի համատեղ ջանքեր: Յուրաքանչյուր դերակատար ունի իր դերը բնակարանային լուծումների այնպիսի էկոհամակարգի զարգացման հարցում, որը կարող է բավարարել փախստականների բազմազան կարիքները և նվազեցնել վտարման ռիսկը: Ուղեցույցում հստակ ուրվագծված գործողությունների շարքը կարող է օգտագործվել ֆոնդերի ներգրավման ժամանակ դոնորներին համահունչ տեղեկություններ տրամադրելու համար, այդ թվում՝ արձանագրելու վտարման ռիսկի կանխարգելման նպատակով թարգմանչական ծառայությունների ապահովման անհրաժեշտությունը նրանց համար, ովքեր դրա կարիքը ունեն:

Հիմնավորում.

- Ապահովել համապարփակ աջակցություն, համապատասխան շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունը Կառավարությանը թույլ կտա գործի դնել փորձագիտական գիտելիքը, ռեսուրսները և նյութատեխնիկական աջակցությունը, որոնք անհրաժեշտ են տեղահանված բնակչության բնակարանային կարիքների բավարարման համալիր մոտեցման համար:
- Ֆինանսական ռեսուրսների ապահովում, դիմելով միջազգային աջակցությանը՝ Կառավարությունը կարող է փոխհատուցել բազմոլորտ ծրագրի իրականացման հետ կապված ֆինանսական ծախսերը: Տարբեր աղբյուրներից ֆինանսավորում ստանալը կապահովի նկարագրված միջոցառումների կայունությունն ու արդյունավետությունը:

3. Միջոցորոտային պատրաստվածություն

Ստորև աղյուսակում ներկայացված են ոլորտային աշխատանքային խմբերի համար առաջարկվող պատրաստվածության միջոցառումները և գործողությունները:

Ոլորտ / աշխատանքային խումբ	Պատրաստվածության միջոցառումներ	Պատրաստվածության գործողություններ
Պաշտպանություն, Կացարան և ոչ պարենային ապրանքներ, Գենդերով պայմանավորված բռնություն, Դիմակայունություն	Իրականացվում են ժամանակին, ճշգրիտ և հաշվետու ուղղորդումներ՝ ըստ առաջնահերթության չափորոշիչների (տես ստորև՝ կետ 4): Առկա է ծառայությունների ճշգրիտ և արդի քարտեզագրում (գտնվելու վայրը, ծառայությունը ստանալու չափորոշիչները, ուղղորդման կարգը):	<ul style="list-style-type: none"> ▪ Անձնակազմը վերապատրաստված է անվտանգ հայտնաբերման և ուղղորդման համար՝ համաձայն վտարման առաջնահերթության չափորոշիչների և ուղղորդման ուղեցույցների: ▪ Կացարանի և պաշտպանության հարցերով պատասխանատու անձնակազմը հատկապես լավ է վերապատրաստված պաշտպանության ռիսկերը բացահայտելու համար՝ ՄՄՕ սոցիալական աշխատողների և/կամ համայնքային աշխատողների հետ միասին: ▪ Բոլոր գործընկերները պետք է թարմացնեն և օգտագործեն



		<p>ծառայությունների քարտեզագրումը՝ հստակ և ճշգրիտ ուղղորդման մեխանիզմ ապահովելու համար:</p>
<p>Պաշտպանություն, Կացարան և ոչ պարենային ապրանքներ</p>	<p>Համայնքների համար հասանելի են վտարման կանխարգելման/արձագանքման առկա ծառայությունների և աջակցության մասին տեղեկություններ, և նրանք ունեն գիտելիքներ ու իրազեկված են բնակարանի/հողի/սեփականության իրավունքների մասին՝ այդպիսով ապահովելով ինքնուղղորդումը:</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Մտահոգության ներքո գտնվող անձանց, գործընկերների և աշխատակիցների և տեղական մարմինների համար իրականացվում են իրազեկման միջոցառումներ և վերապատրաստումներ՝ վարձակալական իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև հասանելի իրավաբանական ծառայությունների, պաշտպանության և կացարանային ծառայությունների ու չափորոշիչների վերաբերյալ: Անհատական գործերի համար հասանելի է իրավաբանական օգնություն: ▪ Մտահոգության ներքո գտնվող անձանց, գործընկերների և տեղական մարմինների համար հասանելի են «Հաճախ տրվող հարցեր» վտարման և վարձակալության պայմանագրերի մասին:
<p>Պաշտպանություն, Կացարան և ոչ պարենային ապրանքներ, Դիմակայություն, Միջոցորտային աշխատանքային խումբ</p>	<p>Օպերատիվ համակարգում (տեղեկատվության փոխանակում, կրկնօրինակումներից խուսափում, լավագույն փորձի/քաղած դասերի փոխանակում և այլն):</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Ստեղծվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համակարգման մեխանիզմ՝ վտարումները կանխելու նպատակով համագործակցաբար արձագանքելու համար:
<p>Պաշտպանություն, Կացարան և ոչ պարենային ապրանքներ</p>	<p>Առկա են վերաբնակեցման տարբերակներ՝ որպես ծայրահեղ միջոց, և դրանց մասին հայտնի է աշխատակազմին, ինչը վերջիններիս թույլ է տալիս առկա տարբերակների մասին պատշաճ կերպով տեղեկացնել տնային տնտեսություններին և/կամ անհատներին:</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Կոլեկտիվ կացարանների կարգավիճակը պարբերաբար թարմացվում է, և կացարանի ու պաշտպանության հարցերով պատասխանատու անձնակազմը վերապատրաստված է բնակարանային ֆոնդի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություն տրամադրելու համար:



4. Միջոցառումային արձագանքում վտարմանը

Այս բաժինը նկարագրում է հնարավոր աջակցությունը, որը կարող է տրամադրվել ի պատասխան վտարման, երբ հայտնաբերվում են նման դեպքեր: Անհատական վտարմանը արձագանքելու միջոցները պետք է հարմարեցվեն գործի առանձնահատկություններին, ինչպիսիք են վտարման պատճառը և ներգրավված անհատի կամ տնային տնտեսության պաշտպանության բնութագիրը:

Վտարման առանձին միջադեպերին արձագանքելու գործընթացը մեծամասամբ համապատասխանում է անհատական վտարման սպառնալիքներին արձագանքելու նկարագրված միջոցներին: Այնուամենայնիվ, վտարման դեպքերը պահանջում են արագ արձագանք՝ ժամանակին միջամտություններ ապահովելու համար, ներառյալ՝ աջակցելով տնային տնտեսություններին/անհատներին վերաբնակեցման մասին տեղեկացված որոշումներ կայացնելու և անօթևանությունից ու հարակից ռիսկերից խուսափելու հարցում:

I. Կատարել վտարման գնահատում

Վտարման ցանկացած հայտնաբերված դեպք պետք է անհապաղ ուղղորդվի ՄՄՕ՝ սոցիալական աշխատողի կողմից ընթացք տալու համար: Սոցիալական աշխատողը իրականացնում է նախնական գնահատում, որը ներառում է վտարման ռիսկերի/սպառնալիքների գնահատում և գործի համապարփակ պլանի կազմում: Գնահատման ենթակա ոլորտները ներառում են.

- Վտարման ծանուցման պատճառ(ներ)ը
- Սպառնալիքի ռիսկի մակարդակը (այսինքն՝ որքան արագ է անհրաժեշտ միջամտությունը)
- Տնային տնտեսության բոլոր անդամների խոցելիությունը և կարողությունները:

II. Կազմել գործի համապարփակ պլան

Վտարման գնահատումից հետո սոցիալական աշխատողը կազմում է գործի համապարփակ պլան, որը ներառում է գործի հակիրճ գրավոր ամփոփումը և առաջարկությունները, ներառյալ՝ անհրաժեշտ ուղղորդումները դեպի ծրագրեր, որոնք կարող են մեծացնել կարողությունները, նվազեցնել խոցելիությունը և/կամ վերացնել սպառնալիքները (օրինակ, համապատասխանաբար, կենսապահովման միջոցների ծրագրավորում, դրամական օգնություն կամ սոցիալական բնակարաններ): Կարող են անհրաժեշտ լինել նշանակված սոցիալական աշխատողի հետ համաձայնեցված լրացուցիչ միաժամանակյա միջամտություններ՝ կախված դեպքի բնույթից և հրատապությունից:

III. Ուղղորդումներ

Ցանկացած հնարավոր ուղղորդում պետք է բխի վերը նշված գնահատումից և գործի պլանից: Բնակարանային լուծումները բաժանվում են երկու լայն կատեգորիաների՝ շուկայական և սոցիալական, և յուրաքանչյուր դեպք պետք է գնահատվի այնպես, որ լավագույնս համապատասխանի տեղավորմանը անմիջական, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, իսկ համապատասխան մոտեցումը պետք է արձանագրվի գործի պլանում: Նախքան գործը սոցիալական բնակեցման ուղղորդելը, անհրաժեշտ է մանրակրկիտ դիտարկել բոլոր հնարավոր տարբերակները և տվյալ գործի հարաբերական խոցելիությունը մյուսների համեմատ, որոնք նույնպես կարող են ուղղորդվել (սահմանափակ) սոցիալական բնակեցման՝ հաշվի առնելով օրենսդրությամբ ամրագրված համապատասխանության չափորոշիչները:

Բոլոր ուղղորդումները և գործի պլանները պետք է հաշվի առնեն Կառավարության կողմից իրականացվող ջանքերը՝ փախստականներին տրամադրվող աջակցությունը Հայաստանում գործող սոցիալական աջակցության ազգային ծրագրերում ներառելու ուղղությամբ: Ուղղորդումները կարող են ներառել ստորև նշված աջակցությունը:



Մոցիալական բնակարաններ և կոլեկտիվ կացարաններ

Վտարման հաստատված վտանգի դեպքում ուղղորդումներ կարող են կատարվել համապատասխան մարմիններին՝ հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված համապատասխանության չափորոշիչները:

Պետք է նկատի ունենալ, որ իրար հետ չփոխկապակցած ընտանիքների համատեղ բնակեցումը կոլեկտիվ կացարաններում բարձրացնում է գենդերով պայմանավորված բռնության վտանգը: Խորհուրդ է տրվում սահմանել հստակ չափորոշիչներ, որպեսզի ապահով կերպով որոշումներ կայացվեն այն մասին, թե որ ընտանիքները/անհատներն են միասին տեղավորվում և ռիսկի նվազեցման ինչ լրացուցիչ միջոցներ պետք է ձեռնարկվեն: Գենդերով պայմանավորված բռնության ենթադրատյային աշխատանքային խումբը հասանելի է այդ կապակցությամբ տեխնիկական խորհրդատվություն տալու համար, ներառյալ կոնկրետ վայրում գենդերով պայմանավորված բռնության ռիսկի գնահատումը:

Նպատակային դրամական աջակցություն (դրամական աջակցություն վարձակալության համար)

Ուղղորդված անձանց/տնային տնտեսություններին գործն ուսումնասիրելուց հետո կարող է օգնություն տրամադրվել դրամական աջակցության պայմանական ծրագրի շրջանակներում (բնակարանի վարձակալության և/կամ կոմունալ ծառայությունների համար): Պետք է կենտրոնանալ խոցելի անհատների/տնային տնտեսությունների վրա, որոնք չունեն կենսապահովման միջոցների հասանելիության կարողություն:

Կենսապահովման միջոցներ

Այն տնային տնտեսությունների դեպքում, որոնք ունեն անդամներ, ովքեր ցուցաբերել են աշխատանք գտնելու հարցում աջակցություն ստանալու ունակություն/հետաքրքրություն, կարող են ուղղորդումներ կատարվել բնակության տարածքում գործող համապատասխան գործընկերներին: Այս տարբերակը պետք է նախընտրելի լինի, երբ իրագործելի է համապատասխան բնակչության դիմակայունությունը զարգացնելու համար, թեև այն կարող է պահանջել զուգակցում դրամական աջակցության հետ՝ մինչև եկամտաբեր աշխատանք ձեռք բերելը:

Բնակարանային աջակցության այլ ծրագրեր

ՀՀ կառավարության կողմից սահմանվելու դեպքում ներառել բնակարանային աջակցությանն ուղղված այլ ծրագրեր(*):

* Բնակարանային աջակցության հնարավոր ծրագրերի քննարկումները շարունակվում են, մասնավորապես այն կազմակերպությունների հետ, որոնք ներկայումս խորհրդատվություն են տրամադրում ՀՀ կառավարությանը: Դրանք ենթադրում են միջնաժամկետ և երկարաժամկետ արձագանքման միջոցներ, և դեռևս հստակեցման կարիք ունի այն հարցը, թե արդյոք դրանք կիրառելի են վտարման վտանգի տակ գտնվող ընտանիքներին աջակցելու համար: